Հայտարարություն

Մրցույթ՝ ՀՀ Կոտայքի մարզի «Ջրվեժի միջնակարգ դպրոց» ՊՈԱԿ-ի քիմիա **(12** դասաժամ**),** անգլերեն **(22** դասաժամ**),** ֆիզիկա (6 դասաժամ), ինֆորմատիկա **(19** դասաժամ **),** պատմություն (22 դասաժամ), կենսաբանություն (3 դասաժամ), հայոց լեզու (22 դասաժամ), ֆիզկուլտուրա **(33** դասաժամ **) ուսուցչի թափուր տեղերի համար**

Մրցույթն անցկացվում է երկու փուլով՝ թեստավորման և հարցազրույցի: Թեստավորման փուլն անցկացվում է՝ ըստ ՀՀ ԿԳՄՍՆ մշակած հարցաշարի: Հարցազրույցի փուլի հարցաշարը կազմում է հաստատությունը և յուրաքանչյուր մասնակցի հետ հարցազրույցն անցկացնում առանձին:

Մրցույթին մասնակցելու համար պետք է ներկայացնել՝
- դիմում (ձև 1),
- 1 լուսանկար 3x4 չափի,
- բարձրագույն կրթությունը հաստատող փաստաթուղթ (դիպլոմ),
- անձը հաստատող փաստաթուղթ,
- «Հանրակրթության մասին» ՀՀ օրենքի 26-րդ հոդվածի 1-ին մասին համապատասխան՝ աշխատանքային ստաժի վերաբերյալ տեղեկանք աշխատավայրից և աշխատանքային գրքույկի պատճենը (առկայության դեպքում),
- ինքնակենսագրություն (ձև 5),
- այլ պետությունների քաղաքացիները՝ ՀՀ-ում աշխատելու իրավունքը հավաստող փաստաթուղթ,
- ՀՀ արական սեռի քաղաքացիները՝ նաև զինվորական գրքույկ,
- հրատարակված հոդվածների ցանկ կամ գիտական կոչումը հավաստող փաստաթղթեր (առկայության դեպքում),
- որակավորման տարակարգ ունենալու դեպքում՝ հավաստող փաստաթուղթ:

Տնօրենի կողմից նշանակված պատասխանատու անձը փաստաթղթերի բնօրինակները համեմատում է պատճենների հետ և բնօրինակները վերադարձնում: Եթե ներկայացված փաստաթղթերի ցանկն ամբողջական չէ կամ առկա են թերություններ, մասնակիցը կարող է մինչև փաստաթղթերի ընդունման ժամկետի ավարտը վերացնել և համալրել դրանք:

Փաստաթղթերն ընդունվում են օգոստոսի 24-ից մինչև սեպտեմբերի 6-ը ներառյալ, ամեն օր՝ ժամը 08:30-ից 16:00-ը, բացի շաբաթ, կիրակի և ոչ աշխատանքային այլ օրերից:

Մրցույթը տեղի կունենա **2023 թ. սեպտեմբերի 12-ին՝ ժամը 15:00-ին**, ՀՀ Կոտայքի մարզի Ջրվեժի միջնակարգ դպրոցում, հասցե՝ Կոտայքի մարզ, գյուղ Ջրվեժ, 3-րդ փողոց 5-րդ շենք : Տեղեկությունների համար զանգահարել 091-53-92-28 հեռախոսահամարով: